ԿԱ ՄԻ ԶՐՈՒՅՑ, ԹԵ...



ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒՆ
(1913–1984)

Հայ բանաստեղծ, առակագիր Մկրտիչ Կորյունը ծնվել է Կարսում: Եղեռնի տարիներին Մ. Կորյունի ընտանիքը գաղթում է և բնակություն հաստատում Գյումրիում: 1929 թ. նա ավարտում է տեղի յոթնամյա դպրոցը:

1932 թ. հրատարակվում է նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Տեմպերի հերոսները» վերնագրով: Նույն թվականին Կորյունը ընդունվում է Երևանի պետական համալսարանի լեզվագրական բաժինը: 1937 թ. ավարտում է համալսարանը և նվիրվում իր սիրած գործին՝ մանկավարժությանն ու մանկական գրականությանը:

Հայրենական պատերազմի ավարտից հետո Կորյունը նոր եռանդով շարունակում է իր գրական գործունեությունը: 1947 թ. Մ. Աբեղյանի անվան ինստիտուտում ատենախոսություն է պաշտպանում « «Հասկերը» որպես մանկական գրական ամսագիր» թեմայով և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: